ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«----» հունվարի 2012թ.** **N------ -Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

## «ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎ ՔԱՂԱՔ ՎԵՆԵՏԻԿԻ, ԻՏԱԼԻԱ, ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Հաստատել 2011թ. դեկտեմբերի 15-ին Վենետիկ քաղաքում ստորագրված Քաղաք Երևանի, Հայաստան, և քաղաք Վենետիկի, Իտալիա, միջև քույրացման վերաբերյալ համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎ ՔԱՂԱՔ ՎԵՆԵՏԻԿԻ, ԻՏԱԼԻԱ, ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Իտալիայի Հանրապետության Վենետիկ քաղաքի միջև երկկողմ համագործակցության հաստատման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը, անհրաժեշտ եմ համարում վերոնշյալ համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎ ՔԱՂԱՔ ՎԵՆԵՏԻԿԻ, ԻՏԱԼԻԱ, ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաք Երևանի, Հայաստան, և քաղաք Վենետիկի, Իտալիա, միջև քույրացման վերաբերյալ» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՎ ՔԱՂԱՔ ՎԵՆԵՏԻԿԻ, ԻՏԱԼԻԱ, ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Քաղաք Երևանի, Հայաստան, և քաղաք Վենետիկի, Իտալիա, միջև քույրացման վերաբերյալ» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2011 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևանի քաղաքապետարան

CITTA' DI VENEZIA

# Համաձայնագիր
# Քաղաք Երևանի, Հայաստան, և քաղաք Վենետիկի, Իտալիա, միջև քույրացման վերաբերյալ

Քաղաք Երևանը, Հայաստան, և քաղաք Վենետիկը, Իտալիա, ներկայացված այստեղ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի եւ Վենետիկի քաղաքապետ Ջորջո Օրսոնիի կողմից,

ճանաչելով հայերին և վենետիկցիներին միավորող 16-դարյա պատմական և մշակութային կապերը և նկատի ունենալով, որ միջազգային համագործակցությունը ամրապնդում է ժողովուրդների միջև կապերը ամբողջ աշխարհում, ստեղծում արդյունավետ հարաբերություններ քաղաքների միջև և ազգերի միջև և նպաստում տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական բնագավառներում խնդիրների լուծման փորձի փոխանակմանը,

Հաշվի առնելով նրանց ընդհանուր հատկանիշները և և այն փաստը, որ յուրաքանչյուրն իր տարածքում և երկրում ունի կարևոր դեր՝ ինչպես տնտեսական և այնպես էլ մշակութային տեսանկյուններից,

Ցանկանալով ամրապնդել Երևանի եւ Վենետիկի միջև տնտեսական և մշակութային կապերը՝ կյանքի որակը և բնակիչների բարեկեցությունը բարելավելու նպատակով, և զարգացնել երկու Քաղաքների միջև առևտրական եւ մշակութային հարաբերությունները.

ստորագրում են սույն Համաձայնագիրը քույրացման վերաբերյալ

Կողմերը պարտավորվում են աջակցել տնտեսական, զբոսաշրջության, սպորտի, մշակութային, բազմամշակութայնության զարգացմանը, այնպես որ յուրաքանչյուրի ունակությունները ստորև ներկայացվող գործողությունների միջոցով օգտագործվեն հանուն փոխադարձ շահի.

հայ և վենետիկցի գործարարների միջև հանդիպման առիթների ստեղծում՝ զբոսաշրջության, մշակութային ժառանգության կառավարման, քաղաքային կառավարման մեջ բարձր տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում թեմատիկ ժողովներ կազմակերպելու միջոցով,

մասնակցություն համատեղ ծրագրերի՝ ցուցահանդեսների, փառատոնների, տոնավաճառների և ժողովների շրջանակներում՝ երկու քաղաքների տնտեսությունները և մշակույթներն իրազեկելու նպատակով,
համագործակցություն մշակութային հաստատությունների և թանգարանների միջև և գեղարվեստական արժեքներին և արվեստի հավաքածուներին առնչվող համատեղ ծրագրերի զարգացում:

Սույն Համաձայնագիրը ստորագրված է երկու բնօրինակից՝ հայերեն և իտալերեն լեզուներով, որոնք երկուսն էլ հավասարազոր են:

Վենետիկ, 15-ը դեկտեմբերի 2011 թ.

| Վենետիկ քաղաքի համար | Երևան քաղաքի համար |
|---|---|
| Ջորջո Օրսոնի | Տարոն Մարգարյան |
| Քաղաքապետ | Քաղաքապետ |